ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2023 թվականի N 512 - Ա

« ԱՄՓՈՓՈՒՄ ԵՆՔ ՏԱՐԻՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Ամփոփում ենք տարին» մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:
2. Հաստատել՝

1) «Ամփոփում ենք տարին» մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) «Ամփոփում ենք տարին» մշակութային միջոցառման անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի.

3) «Ամփոփում ենք տարին» մշակութային միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N3-ի.

4) «Ամփոփում ենք տարին» մշակութային միջոցառման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված N4-ի.

5) «Ամփոփում ենք տարին» մշակութային միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 18
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ դեկտեմբերի 18-ի
N 512-Ա որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ

Մշակութային ստուգատես «Ամփոփում ենք տարին» միջոցառման

1. Հ. Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2. Ա. Ավագյան - ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական
3. Մ.Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ն.Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
5. Ս.Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ
6. Ա.Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
7. Թ.Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
8. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝

Գ. Թադևոսյան
/Գլխսվոր քարտուղարին փոխարինող/

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբեր 18-ի
N 512-Ա որոշման

Մշակութային ստուգատես միջոցառում
«Ամփոփում ենք տարին» միջոցառման նկարագիր

Մշակույթի ոլորտի (վոկալ, պար, կատարողական արվեստ) տարվա շնորհաշատ կատարողների, երաժշտական ու արվեստի դպրոցի սաների մասնակցությամբ համերգ-ստուգատեսի կազմակերպում Մեղրի համայնքում: Ստուգատեսով կամփոփվի տարին, մասնակիցներին հնարավորություն կտրվի տոնական մթնոլորտում ներկայացնել իրենց կատարողական վարպետությունը, ամփոփել ձեռքբերումները: Կկազմակերպվեն վարպետության դաս ու համատեղ քննարկումներ՝ Կապան և Մեղրի համայնքների շնորհալի և ստեղծագործող պատանիների մասնակցությամբ: Միջոցառմանը կմասնակցեն «Կապանի N 2 երաժշտական դպրոց» և «Մեղրի համայնքի«Արևիք» արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ների սովորողները, համայքներում գործող երաժշտական ու պարի խմբեր, անհատ կատարողներ, երաժիշտներ և մշակութային այլ գործիչներ:
Կապան և Մեղրի համայնքների գեղարվեստի, արվեստի և երաժշտական կրթօջախների սովորողների մասնակցությամբ կներկայացվի միասնական համերգ, «Սյունիքյան գույներ» խորագրով ցուցահանդես:

Միջոցառման շրջանակներում մասնակիցների համար կկազմակերպվի գիտաճանաչողական այց՝ Մեղրի քաղաքի 17-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցի և Իգիթյանի անվան գեղագիտական կենտրոնի Մեղրու մասնաճյուղ:
Միջոցառմանը կմասնակցեն նաև Արցախի տարբեր բնակավայրերից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներ, ովքեր ժամանակավոր կացարան են ստացել Մեղրի համայնքում, նրանց կներկայացվի Մեղրի համայնքի մշակույթը:

Միջոցառման հիմնական նպատակներից է համայնքների մշակութային անցուդարձի, երաժշտական ու արվեստի դպրոցներում սովորող երեխաների ուսուցանածի համատեղ ամփոփումը, կհայտնաբերվեն արհեստ ու արվեստ ներկայացնող շնորհալի ստեղծագործողներ:

Միջոցառումը կամփոփվի «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում, որտեղ էլ կներկայացվի Նոր տարվան նվիրված տոնական համերգ՝ նվիրված Արցախի տարբեր բնակավայրերից բռնի տեղահանված ընտանիքներին:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Գ. Թադևոսյան
/Գլխավոր քարտուղարին փոխարինող/

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 18 -ի
N 512 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

Մշակութային ստուգատես «Ամփոփում ենք տարին» միջոցառման

Միջոցառման հիմնական նպատակն է՝ միջոցառումներին մասնակից դարձնել Արցախի տարբեր բնակավայրերից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներին, ովքեր ժամանակավոր կացարան են ստացել Մեղրի համայնքում, նրանց ներկայացնել Կապանի և Մեղրի համայնքներում գեղարվեստի, արվեստի և երաժշտական կրթօջախներում գործող մասնագիտական բաժինները:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը.

«Ամփոփում ենք տարին» միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը, կատարողը՝ «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Միջոցառման ղեկավարումը իրականացնում է միջոցառման կազմակերպման նպատակով ստեղծված կազմակերպչական կոմիտեն և «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Միջոցառման ժամկետը և վայրը.

Միջոցառումը անց է կացվելու 2023թ. դեկտեմբեր ամսին՝ Մեղրի համայնքում:

Միջոցառման ընթացքը.

«Ամփոփում ենք տարին» միջոցառումը կազմակերպվում է ըստ ծրագրի՝ հաստատված ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ժամանակացույցը և առանձին միջոցառումների անցկացման վայրը:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմակերպական կոմիտեի հետ:

Միջոցառման ծախսերը.

Միջոցառման անցկացման հետ կապված ծախսերը /տրանսպորտի, սննդի և այլ ծախսերը/ հոգում են միջոցառման կազմակերպիչները՝ համաձայն հաստատված նախահաշվի:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝
Գ. Թադևոսյան
/Գլխավոր քարտուղարին փոխարինող/

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 18 -ի
N -Ա որոշման
512

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
Մշակութային ստուգատես միջոցառում
«Ամփոփում ենք տարին» միջոցառման նկարագիր

	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	**145.0**
2	Սարքերի և սարքավորումների վարձակալություն	4216	**40.0**
3	Հանրային սննդի ծառայություններ	4236	**160.0**
4	Նվերներ	4237	**75.0**
5	Այլ մասնագիտական ծառայություններ	4241	**120**
6	Գրասենյակային պիտույքներ	4261	**20.0**
7	Ընդամենը		**560.0**
	ԱԱՀ		**140.0**
	Ընդամենը		**700.0**

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Գ. Թադևոսյան
/Գլխավոր քարտուղարին փոխարինող/

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 18 -ի
N 512 -Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Մշակութային ստուգատես միջոցառում.
«Ամփոփում ենք տարին» միջոցառման նկարագիր

h/h	Միջոցառման անվանումը	Ժամանակը	Վայրը
1	1.1 Մշակութային ստուգատես միջոցառում «Ամփոփում ենք տարին»	27 դեկտեմբեր 2023 թ.	Մեղրի համայնք
	1.2 Այցելություն Սուրբ Աստվածածին եկեղեցի	27 դեկտեմբեր 2023 թ.	Մեղրի համայնք
	1.3 Այցելություն Հ.Իգիթյանի անվան գեղագիտական կենտրոնի Մեղրիի մասնաճյուղ	27 դեկտեմբեր 2023 թ.	Մեղրի համայնք ք. Մեղրի
	1.4 «Ամփոփում ենք տարին» համերգ	27 դեկտեմբեր 2023 թ.	Մեղրի համայնք ք. Ագարակ «Մեղրի Արևիք արվեստի դպրոց» ՀՈԱԿ
2	Համերգ	դեկտեմբեր 2023 թ.	«Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Գ. Թադևոսյան
/Գլխավոր քարտուղարին փոխարինող/

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101